ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N 44
18.Դեկտեմբեր. 2019թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի Մարզպետ
Հ.Մաթևոսյանին

Հարգարժան Պարոն Մարզպետ

Կից Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Ամասիա համայնքի բյուջեն հաստատված Ամասիա համայնքի ավագանու 17.12.2019թ թիվ 5 նիստով:

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՐԻԿ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ Ա-22828-2019
23 12 2019

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

# ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Ամասիա համայնքի ավագանու 2019թ ի դեկտեմբերի 17-ի N 13Ն որոշմամբ

Արմավիրի ՏԳԲ

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible]ՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

17.Դեկտեմբերի .2019թ. գ. ԱՄԱՍԻԱ

# ՈՐՈՇՈՒՄ N 11-Ն

## /ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամասիա գյուղական համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 5 հերթական նիստի օրակարգը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ կողմ դեմ ձեռնպահ

Արամ Մանուկյան

Ռուբեն Հովհաննիսյան

Գևորգ Հովհաննիսյան

Մանուկ Մխիթարյան

Մարտիրոս Թովմասյան

Ամասիա համայնքի ղեկավար Գ. Ավդալյան

Հավելված N

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի Ամասիա

համայնքի ավագանու

2019 թվականի դեկտեմբերի 17-ի N5

նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1.Օրակարգի հաստատելու մասին։

Զեկ. Գ.Ավդալյան

2.Ամասիա համայնքի 2020թ. տեղական տուրքերի հաստատման մասին։

3. 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին։

Զեկ. Գ.Ավդալյան

4.Ամասիա Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

Աշխատակազմի ղեկավար Ա.Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«17» ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019 Թ. N 14 Ա

## ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով,Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի ,,ա,, ենթակետով

համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ամասիայի համայնքապետարանի 2020թ. աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն թիվ 2 հավելվածի.

2. Առաջարկել Ամասիա համայնքի ղեկավարին իրականացնելու սույն որոշումից բխող իրավական գործառույթներ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թ-ի հունվարի 1-ից

Ավագանու անդամներ Կողմ դեմ ձեռնպահ

Արամ Մանուկյան

Ռուբեն Հովհաննիսյան

Գևորգ Հովհաննիսյան

Մանուկ Մխիթարյան

Մարտիրոս Թովմասյան

Ամասիա համայնքի ղեկավար Գ. Ավդալյան

«17» դեկտեմբեր 2019թ. Գլխավոր...

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ամասիա համայնքի ավագանու
2019թ. Դեկտեմբերի 17-ի թիվ 14 Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 12։

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) |
|---|---|---|---|
| | ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 182000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 134000 |
| | | | 316000 |
| | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 3. | Աշխատակազմի քարտուղար | 1 | 140000 |
| | Աշխատակազմ | | |
| 4. | Առաջատար մասնագետ | 2 | 128000 |
| 5. | 2-րդ կարգի մասնագետ | 2 | 93000 |
| | | | 582000 |
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| 6. | Գրադարանավար | 1 | 93000 |
| 7. | Հավաքարար | 1 | 93000 |
| 8. | Պահակ | 1 | 93000 |
| 9. | Էլեկտրիկ | 1 | 93000 |
| | | 4 | 372000 |
| 10. | Անասնաբույժ | 1 | 46500 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 12 | 1316500 |

Ամասիայի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար Ա.Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՄԱՍԻԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

17.դեկտեմբերի.2019թ. գ. ԱՄԱՍԻԱ

# ՈՐՈՇՈՒՄ N 13-Ն

## /ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով,64-րդ հոդվածով, [illegible] համակարգի մասին»ՀՀ օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածով,

## ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Ամասիա համայնքի 2020թ. բյուջեի ընդհանուր ծավալը 31 166./հազար դր. համաձայն հատված 1-ի

2.Հաստատել բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման համաձայն հատված 2-ի

3. Համաձայն բյուջեի ծախսերը տնտեսագիտական դասակարգմամբ համաձայն հատված 3-ի

4.Հաստատել բյուջեի ծախսերը տնտեսագիտական և գործառնական դասակարգմամբ համաձայն հատված 6-ի

5.Հաստատել Ամասիա համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 2-ի:

6.Թույլատրել համայնքի ղեկավարին բյուջեի [illegible] գործառնական ծախսերով նախատեսված հատկացումների վերաբաշխում մինչև 50% չափով:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թ-ի հունվարի 1-ից

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ դեմ ձեռնպահ

Արամ Մանուկյան

Ռուբեն Հովհաննիսյան

Գևորգ Հովհաննիսյան

Մանուկ Մխիթարյան

Մարտիրոս Թովմասյան

Ամասիա համայնքի ղեկավար Գ. Ավդալյան

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Ամասիա համայնքի ավագանու 2019թ-ի դեկտեմբերի 17-ի N 13Ն որոշմամբ

Արմավիրի ՏԳԲ

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible]ՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

2019 թ. դեկտեմբեր 17

# ՈՐՈՇՈՒՄ N 12-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամասիա գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2020 թվականի դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝

Ռուբեն Հովհաննիսյան

Գևորգ Հովհաննիսյան

Արամ Մանուկյան

Մարտիրոս Թովմասյան

Մանուկ Մխիթարյան

Ամասիա
Համայնքի ղեկավար՝ Գ.Ավդալյան

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2019 ԹՎԱԿԱՆԻ դեկտեմբերի 17-Ի N 12-Ն ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 9000 /ինն հազար /դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ,

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 21000 /քսանմեկ հազար/դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 600/վեց հարյուր/ դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1200 / հազար երկու հարյուր/դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 300/երեք հարյուր /դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում՝ շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2000 /երկու հազար/դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000/երեք հազար/ դրամ

2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3250 /երեք հազար երկու հարյուր հիսուն / դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 250 դրամ.

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 90 000/իննսուն հազար/ դրամ

6 Համայնքի տարածքում [illegible] պատրաստված հացի մանրածախ առևտրի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30.000 դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել

ա) առևտրի օբյեկտների համար՝ 21 000/քսանմեկ հազար/ դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 30 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 120 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 300 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 150 000 դրամ

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 60 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1200 /հազար երկու հարյուր/ դրամ

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 /հազար հինգ հարյուր/ դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 600 /վեց հարյուր / դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար 500 դրամ.

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 600 / վեց հարյուր / դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 3000/երեք հազար /դրամ:

11. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար 600 / վեց հարյուր / դրամ.

12 Գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցված ծառայությունների դիմաց վճար սահմանել 600 / վեց հարյուր / դրամ

ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամասիա գյուղական համայնքի ավագանու կողմից ընդունված իրավական ակտի նախագծի օրինականության և հիմնավորվածության ստուգման մասին*

ՀՀ Արմավիրի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Գարիկ Միքայելյանս ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ստուգեցի ՀՀ Արմավիրի մարզի Ամասիա գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2012 թվականի դրույքաչափերի հաստատման մասին» N 10-Ն որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգմամբ պարզեցի, որ տվյալ ակտը ընդունելը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջով։

Ակտի ընդունումն ուղղված է տեղական տուրքերի և վճարների գանձումների միջոցով համայնքի բյուջեի հզորացնելուն և համայնքի զարգացմանը նպաստելուն։

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ Արմավիրի մարզի Ամասիա գյուղական համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի «Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2020 թվականի դրույքաչափերի հաստատման մասին» N 12-Ն որոշումը համապատասխանում է գործող օրենսդրության պահանջներին։

Ամասիա
Համայնքի ղեկավար՝ Գ.Միքայելյան